ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 14-Ա

«26» փետրվարի 2018 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԳԱԶ 2417» ՄԱԿՆԻՇԻ 146 LS 47 ՊԵՏՀԱՄԱՆԻՇՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 11271721 հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող «ԳԱԶ 2417» մակնիշի 146 SL 47 պետհամարանիշով անսարք ավտոմեքենան օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 11271721 հաշվետվությունը՝ օտարման մեկնարկային գինը հաստատել՝ 53550 (հիսուն հինգ հազար հինգ հարյուր հիսուն) դրամ: